ԼՈՒՍՅԱ ԹԱԴԵՎՈՍԻ ՇԱՐԱՄԲԵՅԱՆ

2011թ. օգոստոսի 31-ին, կյանքի 70-րդ տարում վախճանվեց Երևանի պետական համալսարանի "Գիտական տեղեկագիր" հանդեսի պատասխանատու քարտուղար՝ Լյուսյա Թադևոսի Շարամբեյանը:

Լ.Թ. Շարամբեյանը ծնվել է 1941թ. հոկտեմբերի 12-ին Երևանում: 1957թ. գերազանցությամբ ավարտելով միջնակարգ դպրոցը, ընդունվել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ, որն ավարտել է 1962 թվականին, պաշտպանելով դիպլոմային աշխատանքը Լենինգրադի պետական համալսարանի, ֆիզիկայի ֆակուլտետի, նյութի կառուցվածքի ամբիոնում: 1962–1967թթ. աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի, մոլեկուլային ֆիզիկայի ռադիացիոն պրոբլեմների լաբորատորիայում:

1967 թվականից Լ.Թ. Շարամբեյանը տեղափոխվել է աշխատանքի, Երևանի պետական համալսարանի "Գիտական տեղեկագիր" հանդեսում, որպես պատասխանատու քարտուղար, որտեղ էլ աշխատում էր մինչև կյանքի վերջին օրը՝ շուրջ 45 տարի նվիրելով այս չափազանց ծանր, բայց շնորհակալ գործին:

Նրա անմիջական մասնակցությամբ և մեծ ջանքերի շնորհիվ, 2009 թվականից հանդեսը լույս է տեսնում երեք սերիայով, ըստ՝ գիտությունների ճյուղերի, խստորեն պահպանելով 1967թ. ընդունված տարեկան 3 համարի պարբերականությունը: Հաջողվել է 2009 թվականից ֆիզիկամաթեմատիկական սերիան ամբողջովին դարձնել անգլալեզու:

Բոլորն, ովքեր աշխատանքի բերումով շփվել են Լ.Թ. Շարամբեյանի հետ, գիտեն նրա աշխատասիրության, ճիշտ որոշումներ կայացնելու ունակության և նպատակասլացության մասին: Լ.Թ. Շարամբեյանին հատուկ էին իր գործունեության մեջ հույժ կարևոր, ժամանակի զգացողությունը և առաջնայինը՝ երկրորդականից տարանջատելու կարողությունը, բարյացկամությունը և սկզբունքայնությունը:

Երկար ժամանակ լինելով անբուժելի հիվանդ, Լ.Թ. Շարամբեյանը շարունակում էր աշխատել և նույնիսկ այս համարի հետ կապված, գրեթե ողջ աշխատանքները կատարվել են նրա անմիջական ղեկավարությամբ:

2009թ. Լ.Թ. Շարամբեյանը իր երկարամյա, արգասավոր աշխատանքի համար պարգևատրվել է ԵՊՀ 90 ամյակի ոսկե հուշամեդալով:

Լյուսյա Թադևոսի Շարամբեյանի, ղեկավարի, մասնագետի, ընկերոջ, բարի ու համեստ մարդու հիշատակը միշտ պայծառ կմնա նրա գործընկերների, բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ԵՊՀ ռեկտորատ,
"Գիտական տեղեկագիր" խմբագրություն